ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 փետրվարի 2022 թվականի թիվ 52–Ա

ԱՐՄԻՆԵ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԱՅՐՈՒՄԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով և 16-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի թիվ 319-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 44-րդ կետով, հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Այրումի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի 2022թ. հունվարի 5-ի թիվ 3 նիստի արձանագրությունը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ներկայացուցչի եզրակացությունը և Ա.Հակոբյանի դիմումը՝

ո ր ո շ ու մ եմ.

Արմինե Սերյոժայի Հակոբյանին 2022 թվականի փետրվարի 7-ից նշանակել «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Այրումի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում և կնքել աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով:

ՄԱՐԶՊԵՏ Հ. ՂԱԼՈՒՄՅԱՆ

07.02.2022

X

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ